



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2301, ք. Հրազդան, Կենտրոն, Վարչական շենք, Հեռ. (+374 223) 2 37 13, Ֆաքս (+374 223) 2 36 63, Էլ.փոստ kotayk@mta.gov.am

24. 05. 2017 թ. N -----

ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ

Սիրելի՛ շրջանավարտներ,

Ջերմորեն շնորհավորում եմ ձեզ՝ յուրաքանչյուր դպրոցականի քաղաքացիական գիտակացության և նրա հոգևոր կերպարի ձևավորման գործընթացում կարևոր դեր ունեցող ամենաուսանելի՝ «Վերջին զանգ» և «Վերջին դաս» միջոցառումների կապակցությամբ և մաղթում այս օրվա ոգուն համահունչ, բարձր տրամադրություն: Հուսով եմ, որ ուսումնառության տարիների ավարտը և հասուն կյանքի շեմ մուտք գործելու սկիզբն ազդարարող Տոնական զանգի խորհրդավոր դողանջները մշտապես վառ կմնան ձեր բոլորի հիշողության մեջ:

Թանկագին՝ շրջանավարտներ՝,

Դուք ինքնուրույն կյանքի շեմին եք մի այնպիսի ժամանակաշրջանում, երբ մեր երկիրն ընթանում է զարգացման նոր ճանապարհով և վստահաբար իր արժանի տեղը գրավում աշխարհի քաղաքակիրթ հասարակությունների ընտանիքում: Հուսով եմ, որ ձեր սերունդը հավատարիմ կմնա մեր հայրենապաշտ նախնիների սրբազան պատգամներին և արժանապատվությամբ կիրականացնի իրեն վերապահված առաքելությունը ու ակնառու ներդրում կունենա մեր ազգի և պետության գալիք հաղթանակներում: Կարևորելով կայուն գիտելիքներով և վեհ ու վսեմ արժեքներով օժտված սերնդի դերը բարեկեցիկ հասարակության կերտման գործում՝ մեկ անգամ ևս շնորհավորում եմ ձեզ և մաղթում բարի երթ:

Թող իրականություն դառնան ձեր բոլոր իղծերն ու նվիրական երազանքները:

Հարգանքով՝

Գ. Գոմեզյան



Կ. ԳՈՄԵԶՅԱՆ